ներով կը կանոնաւորի, և կը բաժնուի ԱՍՏԵՂԱԲԱՇԽԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ կամ ՀԱՍԱՐԱԿ և ՎԵՐԱԴՐԵԱԼ կամ ՆԱՀԱՆՋ։ Լուսնի աստեղաբաշխական տարին տասներկու լուսնական ամիսներէ բաղկանալով, որոնց միջական չափն է 29օր 12ժ 44′ 2″, 8, արևադարձի տարիէն գրեթէ 11 օր պակաս կ'ըլլայ, որով մէկ արևադարձի տարին 12 լուսնական ամիս ու 11 օր կը բովանդակէ, և տարի կ'ըլլայ որ փոխանակ 12 նոր լուսնի 13 նոր լուսին կ'ունենանք, որ ըսել է թէ արևադարձի ամիսներուն մէկուն մէջ 2 լուսնի ծնունդն կ'ունենանք։ Գիտողութեամբ իմացուեր է որ 19 արևադարձի տարիէն ետև այս երկու լուսաւորաց փոխոխ ընթացքը կուգան կը միանան ու նորէն կը սկսին պըլըլէլ։ Նաև այս բանս անկէ ալ յայտնի է որ արևուն տարեկան մէկ արևադարձի ընթացքը, որ է 365օր, 242264 միջական ժամանակ, թէ որ 19ով բազմապատկենք՝ արտադրեալն է 6939օր, 603016. նոյնպէս լուսնի ամսոյն միջական ընթացքը, որ է 29,530588 օր, թէ որ 235ով բազմապատկենք, որ 19 տարուան մէջ լուսնի ընթացից գումարն է, արտադրեալն է 6939օր, 688180։ Ասկէ յայտնի կը տեսնենք որ 19 արևադարձի տարուան մէջ 235 լուսնի շրջան կը կատարուի, և այս երկու շրջանին բոլոր տարբերութիւնը 0,085164 օրուան մասն է, որ հազիւ թէ ժամ ու կէս կ'ընէ։

Այս 19 արևադարձի տարուան շրջանը Մետոն աթենացին գտաւ Քրիստոսէ իբր 433 տարի առաջ, և առհասարակ ԷՆՆԷԱԴԵԿԱԷՏԵՐԻԴ ըսուեցաւ։ Աթենացիք այս երևելի գիւտիս վրայ այնչափ զարմացան որ ոսկի գլխագրով մարմարիոնի վրայ գրած քաղաքին հրապարակը դրին, ասկէց է որ նաև ՈՍԿԷ-ԹԻՒ կ'ըսուի այս շրջանս։

Լուսնի քաղաքական կամ հասարակ տարին ալ 12 լուսնական ամիսներէ կը բաղկանայ առանց մանր մասունքներն ալ հաշուելու, և 354 օր է։

Լուսնի վերադրեալ կամ նահանջ տարին 13 լուսնական ամիս է, անոր համար ալ 384 օր է։ Նաև 19 տարուան արևու շրջանին մէջ լուսնի նահանջ տարիներն են՝ երրորդը, հինգերորդը, ութերորդը, մետասաներորդը, չորեքտասաներորդը, վեշտասաներորդն ու եօթնևտասներորդը։

Բայց այս ամենայն հաշիւներուն ճշգութիւնը նոր աստեղաբաշխից անխոնջ աշխատութեանց ու դիտողութեանց պտուղն է, վասն զի հիները ոչ հիմնական գործիքներն ունէին և ոչ չափական գիտութեանց կատարեալ տեղեկութիւնները, անոր համար անկարելի էր իրենց աստեղաբաշխական բարակ հաշիւներուն ճշգութիւնը։

Այս համառօտ տեղեկութիւններս տալէն ետև կ'անցնինք այլ և այլ ազգաց տոմարներուն վրայ խօսելու յաջորդ թերթերուն մէջ։

Հ. Հ. Պ

ԱՌԱԿ

Սէր և Մահ.

Օր մը, կ'ըսէ Պղատոն
Այն մեծանուն փիլիսոփայն՝
Թէ Սէրն ու Մահ ճամբէ եկան,
Սաստիկ յոգնած տուն մը իջան
Մէկէն փռուած 'ի քուն մտան։
Սէրն արթնցաւ առտուն կանուխ,
Բայց դեռ թմրած քունն 'ի գըլուխ.
Առանց աղէկ մը նայելու
Մահուան կապարճն առաւ գընաց։
Մահն ալ առանց լաւ դիտելու
Երբ արթնցաւ՝ ելաւ գընաց
Սիրոյ կապարճն ուսը զարկած։
Տեսաւ ծերուկ մը հեռուէն,
Նետ մը քաշեց 'ի կապարճէն,
Շտկեց զարկաւ վիրաւորեց.
Ծերուն արիւնը ոտք հանեց.
Խելքը թռաւ, մազը սևցաւ
Հին կրքերով սիրտն արթնցաւ.
Սէրն ալ որչափ որ ազնիւ մարդ
Որչափ տեսաւ երիտասարդ՝

Օ արկաւ սըխալ մահուան նետով,
Ինկան մեռան թարմ հասակով ։
Սարսափեցան բոլոր մարդիկ
Բողոքեցին դէպ 'ի երկինք ։
Ո՛հ աս ի՞նչ բան է նորելուկ ։
Ըսեց Բնութիւնն , եկաւ գաղտուկ ,
Ու գիշերանց նետերն առաւ
Իրենց առջի կապարճը դրաւ .
Բայց մութ ատեն արտորալով
Բոլոր նետերն չըպարպելով
Դեռ կապարճնին մնաց խառնակ ։
Ասոր համար է կը տեսնաք
Որ կարճ օրով շատք կը մեռնին
Կենաց ճամբէն շուտ մը կ'անցնին .
Շատ ալ ծերեր սիրով բռնկած
Կեանքերնուն վերջն են մոռացած ։

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Սէր հայրենեաց ։

Յինէն ընկալայք դուք զկեանս , և իմաստուն սահմանադրութիւնք հրահանգեցին աստ զմիտս ձեր ։ Օրէնքն իմ հսկեն յապահովութիւն տրուալ քաղաքացւոյն , և ամենեքին դուք երդուայք յայտնի կամ լռելեայն նուիրել զկեանս ձեր ինձ 'ի ծառայութիւն ։ Այսպիսիկ են իրաւունք իմ . իսկ դուք որով իրաւամբք խախտէք զուղղութիւն բարուց , որ հաստատագոյն քան զօրէնս հիմունք են պետութեան իմոյ ։ Չգիտիցէ՞ք զի եղծումն բարուց թոյնք են աշխարհաւեր , և միում եւեթ օրինակի ցոփութեան մարթ է ապականել զազգ մի ողջոյն , և լինել նմա վնասակարագոյն քան զպարտութիւն պատերազմի ։ Եթէ արիութեան պէտք էին առ 'ի խիզախել ընդդէմ պատուհասից հասարակաց , մեծարէիք արգեօք զայնոսիկ . չգիտիցէ՞ք զի ննափառ պերճանքդ , որով հանդէս առնէք անպատուհաս զեղխութեանցդ ձերոց , է վատութիւն դարմելի և ախտոտ ։

Այլ դուք խորեալ անձանց զփառս իմ, իշխէք ամբարտաւանել առաջի օտարաց , զի էք ծնեալք 'ի քաղաքի՝ ուր կացին Սողոն և Արիստիդէս , և սնեալք 'ի դիւցազանց՝ որ յայնչափ 'ի բազում պատերազմունս եստուն զկնուց իմոց յաղթանակել ։ Այլ զի՞նչ բաժին ընդ իմաստունսն ընդ այնոսիկ և ընդ ձեզ , մանաւանդ թէ զի՞ կայ ձեր և հարցն ձերոց ։ Գիտիցէ՞ք ո՞յք են հայրենակիցք և որդիք սուտ արերոյն այնորիկ . քաղաքացիք առաքինիք , յորում պայմանի և յորում ժամանակի և ծնեալք իցեն ։

Երանի էր հայրենեաց նոցա , եթէ ընդ առաքինութիւնս իւրեանց ոչ բերէին յանձին զձախողակի ներողամտութիւնն նպաստամատոյց 'ի կործանումն նորա ։ Լսարո՛ւք և դուք ձայնի իմում, դուք որք գալոց 'ի դարս մշտնջենաւորէք զկենցաղօգուտ ազգ մարդկան ։ Սահմանեցի օրէնս հակառակս անիրաւութեանց , այլ ընդդէմ ախտից ոչ եւ . զի ձեզ եւեթ մարթ է լինել իմ վրէժխնդիր և հալածել զնոսա հզօր թշնամութեամբ ։ Մի՛ չիջցի զայրոյթ ձեր , այլ բորբոքեսցի 'ի վերայ ցոփութեան՝ որ խանգարէ զբարս , 'ի վերայ բռնութեց, անիրաւութեանց և նենգութեանց՝ որք թագչին յերեսաց օրինաց , և 'ի վերայ կեղծ լաւութեան , վեր 'ի վերոյ պարկեշտութեան , սուտ բարեկամութեան , և 'ի վերայ ամենայն անարգ խաբէութեանց՝ որք գողանան զմեծարանս 'ի մարդկանէ ։ Մի՛ ասիցէք՝ թէ փոխեցան ժամանակք , և պարտ է զգուշանալ յերեսաց զօրութեան յանցաւորաց . առաքինութիւն անազդական , է առաքինութիւն անհիմն . զի ուր ոչն մնչէ նա 'ի տեսիլ յանցութեանց , շաղախի 'ի նոյնս . . . ։

Տեսանես հանապազ զբազումս 'ի քաղաքայնոց՝ որք հեծեն 'ի թշուառութեան , և զայլս՝ որ սփոփանաց եւեթ կարօտին բանից և կարեկցութեան այլոց , և հարցանես՝ թէ զի՞արդ մարթ իցէ օգտակար լինել մարդկան , և թէ բնութիւնն ընդ վիշտ զոր ածէ զմեօք՝ յաւելցէ՞ արդեօք զփոխարէնսն ։ Յանկարծ գիտէիր թէ քանի՛ բերկրութիւնս զեղու նա 'ի սիրտս հնազանդելոյ ազգեցութեան իւրոյ ։ Եթէ երբէք զոք 'ի լաւաց զերծուցանիցես 'ի կարօտութենէ կամ 'ի մահուանէ և կամ 'ի նախատանաց , վկայեն ինձ կիրք սրտի քո՝ զի 'ի միտ առնուցուս , թէ են 'ի կենցաղս յայս վայրկեանք գորովանաց՝ որ զվշտալից ամաց հատուցանեն զփոխարէնս ։ Եւ յայնժամ ողորմեսցիս 'ի վերայ այնոցիկ՝ որք դժկամակին ընդ առաքինութիւնս քո , կամ որք յետ վայելելոյ յարգասիս նոցա մոռանայցեն զնոսա ։ Մի՛ լիցի քեզ երկնչել 'ի նախանձոտաց , կրեսցեն նոքա զարժանին պատուհաս յանկարծ կիր սիրտս իւրեանց . զի նախանձն է ժանդ , որ ուտէ զերկաթ ։ Մի՛ զանգիտիցես յերեսաց ապաշնորհաց . նոքա յերեսաց քոց փախիցեն , կամ մանաւանդ 'ի խնդիր քո շրջեսցին , եթէ ընդ բարերարութեանն զոր ընկալան 'ի քէն՝ եղեն կցորդ մեծարանք և շահ ։ Զի եթէ պարծանօք բարերարութեանդ եղծանիցես , յանցաւոր ես , և եղկելի բարերարեալն 'ի քէն ։ Զի , որպէս ոմանք ասացին , պարտ է բարերարին մոռանալ զբարերարութիւն իւր , և ընդունողին յիշել զայն . և ես քեզ ասեմ , զի եթէ առաջինն մոռասցի զայն , երկրորդն յիշեսցէ ։ Եւ զի՞ փոյթ թէ խաբիցիմ . մի՛ թէ առ շահ ինչ օգտի պարտ իցէ բարերարել ։

ՊԼԱՏՈՆ

Ի ՏՐԱՄԱԽՕՍՈՒԹԻՒՆՍ ԻՒՐ ։

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ Ս. ՂԱԶԱՐՈՒ